ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

23 օգոստոսի 2024թ. թիվ 891

Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ
ԿՈՒՐԹԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով գործուղման առաջադրանքները՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Վահրամ Ղարսայանին և ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին ս/թ օգոստոսի 23-ին մեկ օրով գործուղել Կուրթան՝ շինարարական աշխատանքները դիտարկելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
23/08/2024

X
ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. օգոստոսի 23
ք.Վանաձոր